

3731



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան



« 01 » 04 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 085 - 25

Նախաձեռնող՝

«ԴԱՐԻ ՔԱՐ» ՍՊԸ

Արագածոտնի մարզ, Կաքավաձոր 1-ին փ. տ. 35

Գործունեությունը՝

Կաքավաձորի տուֆերի հանքավայրի «Դարի Քար» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանում
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 085 - 25

«01» ապրիլի 2025 թ.

«Դարի քար» ՍՊԸ-ի կողմից Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի «Դարի Քար» տեղամասում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԴԱՐԻ ՔԱՐ» ՍՊԸ
Փաստաթղթերի փաթեթ՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակ Գտնվելու վայրը՝	«Ա» կատեգորիա Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Կաքավաձոր բնակավայր

Ներածական մաս. «Դարի քար» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի «Դարի քար» տեղամասում (այսուհետ՝ Տեղամաս) իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ է:

Հանքավայրը զբաղեցնում է 3,78 հա մակերես: Ըստ հաշվետվությունում նշված տեղեկատվության՝ հայցվող տարածքի հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ վարելահող և այլ հողատեսք:

Նկարագրական մաս. Կաքավաձորի տուֆերի հանքավայրի «Դարի Քար» տեղամասը գտնվում է Արագածոտնի մարզի Թալին համայնքի Կաքավաձոր բնակավայրի վարչական սահմաններում՝ Կաքավաձոր գյուղից ուղիղ գծով մոտ 2,78 կմ դեպի հարավ: Հանրապետական նշանակություն ունեցող Երևան-Աշտարակ-Թալին-Գյումրի ավտոմայրուղին անցնում է տեղամասից մոտ 0,7 կմ հարավ, իսկ 380 մ դեպի արևելք անցնում է Կաքավաձոր գյուղ գնացող ասֆալտապատ ճանապարհը:



Հայցվող տարածքը կապված է Կաքավաձոր գյուղի հետ 4,3 կմ երկարությամբ ասֆալտապատ և մասամբ գրունտային ճանապարհով: Մոտակա բնակավայրերն են՝ Կաքավաձոր (2,7 կմ), Ագարակավան (1,2 կմ), Արուճ (1,06 կմ) և Ներքին Բազմաբերդ (1,03 կմ) գյուղերը և Թալին քաղաքը (17 կմ): Տեղամասի տուֆերի ապարները ծագումնաբանորեն հարում է Թալին-Շամիրամի տուֆային ծածկոցին: Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենի, միջին չորրորդականի հրաբխային և ժամանակակից փոխր-բեկորային առաջացումները: Տուֆերի հաստվածքի ընդհանուր հզորությունը տատանվում է 15,8-ից 19,3 մ-ի սահմաններում: Տուֆերի հաստվածքը ներկայացված է թույլ ճեղքավորված մուգ մոխրագույն, սևավուն տուֆերով: Վերջիններս աստիճանաբար անցնում են թարմ, թույլ ճեղքավորված տուֆերի: Ժամանակակից առաջացումները ներկայացված են դելյուվիալ փոխր-բեկորային, տուֆերի և անդեզիտաբազալտների բեկորներ պարունակող ավազակավային, ավազախճային նստվածքներով, որոնց հզորությունը տատանվում է 0,1-0,8 մ սահմաններում: Հողաբուսական շերտը թույլ է զարգացած, ներկայացված է խոտաբույսերի արմատներ պարունակող շագանակագույն հողերով՝ ավազակավերի պարունակությամբ, որոնց հզորությունը չի գերազանցում 0,1-0,2 մետրը: Տեղամասի տարածքը ներկայացված է մինչև 5⁰ թեքությամբ մեղմաթեք հարթավայրով: Տարածքի երկրաձևաբանական կառուցվածքը բացառում է սողանքային երևույթների ձևավորումը:

Տարածքում, սահմանված կարգով, իրականացվել են երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ տուֆի արդյունաբերական պաշարների գնահատման համար:

Համաձայն հաշվետվության՝ հետախուզված տեղամասի տուֆերի հաստվածքը, ինչպես նաև մերձակայքը ջրազուրկ են, ստորերկրյա ջրերի հորիզոններ և ելքեր (աղբյուրներ) հայտնաբերված չեն: Ստորերկրյա ջրերի բացակայությունը պայմանավորված է տեղամասի տարածքի երկրաբանական և գեոմորֆոլոգիական առանձնահատկություններով: Տեղամասի տուֆերը աչքի են ընկնում իրենց բարձր ջրաթափանցելիությամբ:

Տեղամասի երկրաբանական, հիդրոերկրաբանական և գեոմորֆոլոգիական պայմանները, ինչպես նաև մակաբացման ապարների ոչ մեծ հզորությունները, թույլ են տալիս վերջինիս մշակումն իրականացնել բաց եղանակով:

Ըստ հաշվետվության՝ ուսումնասիրվել է հայցվող տարածքը և կարմիրգրքային տեսակներ չեն դիտարկվել: Տեղամասը չի առնչվում բնության հատուկ պահպանվող տարածքների, ինչպես նաև բնության և պատմամշակութային հուշարձանների կամ դրանց սահմանների հետ:

Տեղամասի պաշարները հաստատվել են տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի մայիսի 17-ի № 1032-Ա հրամանով՝ 2023 թվականի մայիսի 1-ի դրությամբ, Հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 5-ի թիվ 76 փորձագիտական եզրակացությամբ՝ 2023 թվականի մայիսի 1-ի դրությամբ A կարգով և 633400 մ³ քանակով:

Տեղամասի տուֆերը որակական հատկություններով բավարարում են ուղիղ կտրվածքով պատքարի արդյունահանման հումքին (4001-2023 թվականի «Պատքարեր լեռնային ապարներից: Տեխնիկական պայմաններ») ներկայացվող պահանջներին,



տուֆերի ջարդքարը (4001-2023 ԳՕՍՍ-ի պահանջներին չբավարարող տուֆերը) պիտանի է խճի և ավազի ստացման համար (22263-76 ԳՕՍՍ «Խիճ և ավազ ծակոտկեն լեռնային ապարներից») և թույլատրելի է դրանց կիրառումը շինարարության մեջ:

Տեղամասի մարվող պաշարների քանակը հաշվարկվել է 633400 մ³, իսկ արդյունահանվողը՝ 475600 մ³, տարեկան մարվողը՝ 31670 մ³, արդյունահանվողը՝ 23780 մ³, պատքարի բլոկների միջին ելքը՝ 41,12 %:

Բացահանքի կոորդինատները ARM WGS-84 համակարգով ներկայացված են ստորև՝

X=4465005	Y=8419800	X=4465163	Y=8419959.6
X=4465115.1	Y=8419785.1	X=4465067	Y=8420032
X=4465226	Y=8419770	X=4465023	Y=8419915
X=4465234	Y=8419906.1	X=4465070	Y=8419907

Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40°18' 58" հյուսիսային լայնության, 44°03' 28" արևելյան երկայնության:

Բացահանքի պարամետրերն են՝

- օտարման մակերեսը՝ 3,78 հա,
- ամենամեծ երկարությունը՝ 240 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 210 մ,
- ամենամեծ խորությունը՝ 30 մ,
- մակաբացման ապարների միջին հզորությունը՝ 3,0 մ,
- օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը՝ 5,8 մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ 633400 մ³:

Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներն իրականացվելու են բաց լեռնային աշխատանքներով, առանց հորատապայթեցման: Բացահանքի բացումը նախատեսվում է կատարել նրա հյուսիս-արևմտյան մասի 1377,8 մ բարձրությամբ հորիզոնից: Բացահանքը ծածկող մակաբացման ապարների դեյուվիալ առաջացումները և փուշտան տեղափոխվելու են հանքավայրի արևմտյան հատվածը՝ N 1 լցակույտ, իսկ արդյունահանման ժամանակ առաջացող ջարդքարերը՝ հանքավայրի արևելյան հատվածը՝ N 2 լցակույտ, ստեղծվելու են ժամանակավոր արտաքին լցակույտեր: Հանքավայրի հարավ-արևելյան մասին մոտեցող, գոյություն ունեցող գրունտային ավտոճանապարհի 1365,0 մ բարձրությամբ նիշից նախատեսվում է մուտքային ճանապարհի անցում դեպի բացահանքի հյուսիս արևմտյան մասի՝ 1377,8 մ բարձրությամբ հորիզոն, որի երկարությունը 265 մ է, լայնությունը՝ 7 մ, ամենամեծ թեքությունը՝ 48,3%: Մուտքային ավտոճանապարհը աստիճանաբար կտրտվելով իջնելու է 1373,6 մ, 1371,5 մ - 1365,0 մ հորիզոններ, որոնք բացվելու են նշված ճանապարհից պիտանական խրամների անցումով: 1363,1-1354,7 մ բարձրությամբ հորիզոնները բացվելու են 1365,0 մ բարձրությամբ նիշից թեք կտրող խրամի միջոցով: 1352,6 մ և 1350,5 մ բարձրությամբ



հորիզոնների բացումը իրականացվելու է ներքին թեք խրամներով: Օգտակար հանածոն ծածկող ապարների՝ մակաբացման ապարների ընդհանուր ծավալը կազմում է 94700 մ³: Մակաբացման ապարները կազմված են դեյուվիալ առաջացումներից և փուշտայից /ջարդոտված, հողմնահարված տուֆեր/, որոնց ծավալը համապատասխանաբար կազմում է՝ 14840 մ³ և 79860 մ³: Վերջիններս տեղափոխվելու են N 1 լցակույտ: Շահագործման 5-րդ տարվանից սկսած մակաբացման ապարները տեղափոխվելու են դեպի N 1 լցակույտ՝ շրջանցելով N 2 լցակույտը և բացահանքի հյուսիսային հատվածը: Տեղափոխման առավելագույն երկարությունը 635 մ է: Տուֆի ուղիղ կտրվածքի պատքարի հանույթային աշխատանքները նախատեսվում է կատարել ընդլայնական միակող, խորացող, ցածրաստիճանային մշակման համակարգով: Արդյունահանման տեղամասում ստացված պատքարի բարձումը սպառողի տրանսպորտային միջոցների մեջ կատարվելու է ձեռքով: Ջարդքարերը բացահանքի շահագործման սկզբում տեղափոխվելու են բացահանքի արևելյան մասում գտնվող N 2 լցակույտ: Շահագործման 6-րդ տարվանից սկսած հետագա շահագործման ժամանակ առաջացած ջարդքարերը և N 2 լցակույտ տարված ջարդքարերը իրացվելու են: Հանքավայրի մշակման ընթացքում առաջացող կորուստները կազմելու են 24,91%: Բացահանքի աշխատանքային ռեժիմը 260 օր է՝ օրական 8 ժամ, մեկ հերթով: Բացահանքի ծառայման ժամկետը 20 տարի է:

Աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա: Բացահանքի 1354,7 մ բարձրություն ունեցող հանքաստիճանի վրա տեղափոխված 13600 մ³ ծավալով լեռնային զանգվածը բուլդոզերով տեղափոխվելու, փռվելու է 1354,7 մ, 1352,6 մ և 1350,5 մ նիշ ունեցող հորիզոնների վրա և հարթեցվելու է: Հարթեցումը կատարվելու է բացահանքի հատակի ողջ մակերեսով՝ 15100 մ², ինչպես նաև արտադրական հրապարակը՝ 250 մ²: Ռեկուլտիվացիայի ընդհանուր մակերեսը կկազմի 15350 մ²: Ռեկուլտիվացիան իրականացվելու է աստիճանաբար՝ շահագործմանը զուգահեռ:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո նախատեսվում է կենսաբանական ռեկուլտիվացիա՝ բուսական շերտ ստեղծելու և հողի էրոզիայից խուսափելու նպատակով: Լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ ծախսը կկազմի 1639600 (մեկ միլիոն վեց հարյուր երեսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ: Գումարը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

Աշխատանքներն իրականացնելիս բնատեսուրսներից օգտագործվելու է ջուր, որը տարածք է բերվելու պայմանագրային հիմունքներով՝ տեխնիկական ջուրը՝ բեռնատար ավտոմեքենայի վրա հարմարեցված ցիստեռնով, իսկ խմելուինը՝ ավտոցիստեռնով: Տարածքում առաջացող կենցաղային կեղտաջրերը կուտակվելու են հորատի պ բետոնապատ, անջրթափանց զուգարանում, որտեղից հեռացվելու են պայմանագրային հիմունքներով՝ մասնագիտացված կազմակերպության կողմից:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ազդակիր համայնքում (Կաքավաձոր բնակավայր) անցկացվել է



հանրային լսում, որի ընթացքում մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

Բացահանքում աշխատելու համար ներգրավվելու են համայնքի բնակիչները, բացվելու են աշխատատեղեր: Ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնել պարբերաբար հանդիպել համայնքի ղեկավարության հետ, քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե, գրենական պիտույքներ տրամադրել դպրոցին, ինչպես նաև համայնքում իրականացվող աշխատանքներին օժանդակելու նպատակով տրամադրել տեխնիկական միջոցներ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/բացառման նպատակով նախատեսվել են մի շարք բնապահպանական միջոցառումներ.

➤ փոշեգոյացումը բացառելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով ճանապարհների, լցակույտերի, ապարների, աշխատանքային հրապարակների և այլնի ինտենսիվ ջրցան տարվա դրական ջերմաստիճանի դեպքում,

➤ կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարաների մեջ և տեղափոխում մոտակա աղբավայր՝ համապատասխան ծառայությունների հետ կնքված պայմանագրի համաձայն,

➤ շահագործվող տեխնիկայից արտանետումները նվազեցնելու նպատակով ֆիլտրերի և կատալիտիկ չեզոքացուցիչների տեղադրում,

➤ ջրային ռեսուրսների պահպանության նպատակով մակերևութային հոսքաջրերի բացառում, կեղտաջրերի հավաքում,

➤ շահագործվող տեխնիկայի շարժիչների կարգավորում և մեքենաների շարժիչների կահավորում հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով՝ աղմուկի մակարդակը և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով,

➤ հողային ռեսուրսների պահպանության նպատակով տեխնիկական միջոցների սպասարկումն իրականացվելու է Տեղամասի սահմաններից դուրս՝ սպասարկման մասնագիտացված կետերում,

➤ խախտված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա՝ աշխատանքների ավարտից հետո,

➤ աշխատանքների իրականացման ընթացքում նախաձեռնվելու են միջոցառումներ՝ ուղղված բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների պահպանությանը:

Տեղամասի շահագործման ընթացքում «Դարի քար» ՍՊԸ-ն նախատեսում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝

1. մթնոլորտային օդ արտանետվող աղտոտող նյութերի (ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի երկօքսիդ, մուր, ծծմբային անհիդրիդ, փոշի) պարբերական չափումներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում,

2. աղմուկի և թրթռումների մակարդակի պարբերական չափումներ,

3. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի, մասնավորապես՝ չեզոքացուցիչ սարքավորումների վիճակի պարբերական մշտադիտարկումներ,



4. հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ նվազագույնը տարին մեկ անգամ,

5. կենսաբազմազանության մշտադիտարկում՝ նվազագույնը տարին մեկ անգամ, հետագա պարբերականությունը կսահմանվի հիմնվելով հայցվող տարածքում բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների հայտնաբերումից:

Հանքի փակման աշխատանքների ընթացքում և փակումից հետո ևս նախատեսվում է իրականացնել մշտադիտարկումներ՝ 5 տարի ժամկետով: Մշտադիտարկումների իրականացման ծրագիրը շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ ենթակա է վերանայման՝ հանքի փակման վերջնական ծրագրին համապատասխան:

Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվել պետական կառավարման մարմիններից՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացված կարծիքները:

Նախատեսվող գործունեության ընթացքում բոլոր աշխատանքները նախատեսված են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Փորձաքննական պահանջներ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է՝

1. առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով՝ փոշու և վնասակար արտանետումների տարածումը կանխարգելելու նպատակով, անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առաջացման դեպքում ապահովել լրացուցիչ կանխարգելիչ միջոցառումների իրականացում,

2. բուսական աշխարհի օբյեկտների պահպանության նպատակով առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով,

3. իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային ծածկույթ, օդի որակ, աղմուկ, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումներ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան,

4. թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան,



5. աշխատանքների ավարտից հետո իրականացնել լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

6. ապահովել հաշվետվությունում ներկայացված բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Դարի քար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի «Դարի Քար» տեղամասում արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Քրիստինե Հարությունյան